բարօրություն մեր ազգային բանակի: Վեհափառ Հայրապետը շեշտեց նաեւ, որ ասպվածասիրությունն ու հայրենասիրությունը պիտի անբաժան լինեն Հայրենիքի պաշտպանից:

Այնուհետեւ հոգեւորականները ներկայացրեցին սպասավորության մեջ առկա դժվարությունները: Ի թիվս տարբեր խնդիրների, նրանք նաեւ առանձնակի կարեւորությամբ շեշտեցին, որ այսօրվա հեռուստատեսային հաղորդումները չեն նպաստում երիտասարդ սերնդի հայրենասիրական դաստիարակությանը:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունն ու գնահատանքը փոխանցեց Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանին եւ հոգեւոր սպասավորներին՝ մաղթելով հաջողություններ եւ բարի արդյունքներ իրենց ծառայության մեջ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Փետրվարի 17-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Չինաստանի Ժողովրդական Հանրապետության արտաքին գործերի նախարար Յան Չիեչիին:

Զրույցի ընթացքում Նորին Սրբությունը գոհունակությամբ անդրադարձավ երկու պետությունների միջեւ բարձր մակարդակով իրականացող փոխայցելություններին, ինչպես նաեւ շարունակ սերտացող մշակութային եւ տնտեսական գործակցությանը՝ ի բարօրություն երկու ժողովուրդների: Վեհափառ Հայրապետը խոսեց նաեւ հայ եւ չին ժողովուրդների պատմական կապերի մասին՝ կարեւոր նկատելով ներկայիս ժամանակներում ժողովուրդների բարեկամության ամրապնդումը եւ հետեւողական զարգացումը համընդհանուր մարտահրավերների հաղթահարման համար:

Չինաստանի արտաքին գործերի նախարարն իր հերթին ուրախություն հայտնեց Հայաստան եւ համայն հայության հոգեւոր կենտրոն այցելելու եւ հայկական բազմադարյան մշակույթը ճանաչելու հնարավորության առիթով, ապա ներկայացրեց երկու պետությունների ներկայիս փոխհարաբերությունները եւ շահեկան համագործակցությունը, մասնաւորապես մշակութային կապերը խորացնելու անհրաժեշտությունը:

Հանդիպման ընթացքում անդրադարձ եղավ նաեւ Հայոց Ցեղասպանության ճանաչման ու դատապարտման անհրաժեշտությանը, ինչը կկանխի նման ոճրագործության կրկնությունը ապագայում: Կարեւորվեց նաեւ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցը խաղաղ ճանապարհով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Չինաստանի ԱԳ նախարար Յան Չիեչին Վեհարանում